GOVERNOR
GAVIN NEWSOM

Իրազեկ եղեք ձեր Իրավունքների մասին

Դուք իրավունք ունեք դիտելու, ձայնագրելու և փաստաթղթավորելու: Պահպանեք հանգստություն:

- Դուք կարող եք օրինականորեն հետևել, ձայնագրել և գրի առնել ներգաղթի գծով ձերբակալությունները, որոնք տեղի են ունենում հանրային վայրերում:
- **Հանգիստ մնալն** օգնում է պաշտպանել ինչպես ձեր, այնպես էլ կալանավորված անձի անվտանգությունը: Խոսքով վրա տալը կամ դաշնային գործակալներին ֆիզիկապես մոտենալը կարող է սրել իրավիճակը և վտանգի ենթարկել բոլորին: Դաշնային կառավարությունը կարող է քրեական պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր **խոչընդոտում կամ խանգարում են** դաշնային ծառայողի աշխատանքը:
- Նույնիսկ եթե կարծում եք, որ ձերբակալությունն անօրինական է, չպետք է դիմադրեք կամ ֆիզիկապես Պահպանելով հանգստությունը՝ բանավոր կերպով հաստատեք ձեր իրավունքները:

Ի՞նչ անել, եթե ականատես եք եղել ներգաղթի գծով ձերբակալման.

Ինչ ԿԱՐՈՂ ԵՔ դուք անել՝	Ինչ _ ՉԱՆԵԼ՝
✅ Ձայնագրեք անվտանգ հեռավորությունից:	❌ Մի հարցրեք ներգաղթի կարգավիճակի, ծննդավայրի կամ անձնական տվյալների մասին, ինչպիսիք են հասցեն կամ տվյալներ գործատուի մասին:
✅ Հարցրեք կալանավորվող անձի անունը և կոնտակտային տվյալները, եթե անվտանգ է :	❌ Մի՛ մոտեցեք և դեմ առ դեմ մի կանգնեք գործակալների առաջ: Դա կարող է համարվել միջամտություն:
✅ Հարցրեք, թե արդյոք նա օգնության կարիք ունի դեպքի վայրում մնացած գույքի հետ կապված:	❌ Մի՛ փորձեք խոչընդոտել ձերբակալմանը:
✅ Ձերբակալությունից հետո կապվեք ձեր տեղական արագ արձագանքման ցանցի հետ ՝ միջադեպի մասին հաղորդելու և ցանկացած փաստաթուղթ տրամադրելու համար:	

Ինչպե՞ս ճանաչել ներգաղթի գծով դաշնային գործակալներին.

- Գործակալները կարող են կրել մարտավարական հանդերձանք, հասարակ հագուստ կամ հագուստ, որով նույնականացվում են որպես Ներգաղթի և մաքսային ծառայության (ICE), Հարկադիր կատարման և հեռացման ծառայության (ERO), Սահմանապահ ծառայության (Border Patrol) կամ այլ դաշնային գործակալությունների մաս:
- Նրանք կարող են հանդես գալ որպես «ոստիկանություն», բայց գործեն դաշնային լիազորությունների ներքո:

Հաճախ տրվող հարցեր՝
Ենթակա է հաճախակի թարմացման

Ո՞րոնք եմ իմ իրավունքները՝ որպես ներգաղթի գծով ձերբակալությունների վկա կամ ականատես:

- Դուք կարող եք **հետևել, ձայնագրել կամ գրի առնել տվյալներ** հանրային ձերբակալության դեպքի առթիվ:
- Այս միջադեպերը կարող են շատ լարված և հուզիչ լինել, բայց **հանգստության ապահովումը և պահպանումը** կարևոր է ձեր և **կալանավորված անձի անվտանգության համար:**
- Հանդիմանությունը և դաշնային գործակալներին մոտենալը կարող են **ձեզ և անձին,**
- Դաշնային կառավարությունն ունի պարտավորություն՝ ներկայացնելու դաշնային **քրեական մեղադրանքներ** այն անձանց նկատմամբ, ովքեր կմիջամտեն կամ կխոչընդոտեն դաշնային իրավապահ մարմինների աշխատանքներին:
- Նույնիսկ եթե կարծում եք, որ ձեր իրավունքները խախտվել են, մի վիճեք, մի դիմադրեք և մի խոչընդոտեք ոստիկանության աշխատակցին: Դուք կարող եք **բանավոր կերպով հաստատել ձեր իրավունքները** հանգիստ և հստակ կերպով:
- **Բռնությունը երբեք պատասխան չէ** , իսկ դաշնային գործակալի վրա հարձակումը կամ ձերբակալությանը խոչընդոտելը հանցագործություն է:
- Եթե կարծում եք, որ ձեր իրավունքները խախտվել են, կարող եք կապ հաստատել որակավորված իրավաբանի և այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսին է ACLU.

Ի՞նչ կարող եմ անել, երբ ականատես եմ լինում ներգաղթի գծով ձերբակալման:

- Կարող եք հանգիստ կերպով ձայնագրել ձերբակալությունը անվտանգ հեռավորությունից և հարցնել կալանավորի անունը և հեռախոսահամարը:
- Կարող եք հարցնել կալանավորվող անձին, թե արդյոք նա օգնության կարիք ունի ՝ **հոգ տանելով** ձերբակալման վայրում թողնված անձնական գույքի մասին:
- Հիշե՛ք՝ պահպանե՛ք **անվտանգ հեռավորություն:** Դաշնային գործակալները գուցե չհարգեն ձայնագրման ձեր իրավունքը և դա համարեն

միջամտություն: Անվտանգ հեռավորություն պահպանելը կօգնի ձեզ ապահով մնալ և գրառումներ առնել ձերբակալության մասին:

- Ձերբակալությունից հետո կարող եք կապվել տեղական արագ արձագանքման ցանցի հետ՝ միջադեպի մասին հաղորդում տալու և դրա մասին տեղեկություններ, լուսանկարներ և տեսանյութեր տրամադրելու համար: (ավելացնել հղում)
- **Մի՛** հարցրեք ծննդավայրի, ծննդյան ամսաթվի, ներգաղթի կարգավիճակի կամ ներգաղթի պատմության մասին:
- **Մի՛** հարցրեք տան հասցեն կամ աշխատանքի վայրը:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք դաշնային գործակալներն են ձերբակալում ինձ կամ իմ մտերիմներին:

- Դաշնային գործակալները սովորաբար կրում են տարբերվող հագուստ և հանդերձանք, որով գուցե կարտացոլվի, թե որ գործակալությունից են նրանք: Երբեմն նրանք կարող են լինել հասարակ հագուստով կամ մարտավարական հանդերձանքով: Նրանք կարող են նաև ներկայանալ որպես ոստիկան:
- Դաշնային գործակալներն իրավասու են ձերբակալելու այն մարդկանց, որոնք կասկածվում են երկրում անօրինական կացության համար: Նույնիսկ եթե կարծում եք, որ ձեր իրավունքները խախտվել են, մի վիճեք, **մի դիմադրեք և մի խոչընդոտեք ոստիկանության աշխատակցին:** Դուք չեք կարող խոչընդոտել նրանց աշխատանքը, նույնիսկ եթե համաձայն չեք կամ Դուք կարող եք բանավոր կերպով հաստատել ձեր **իրավունքները**:

  Միջամտելը կարող է մեծացնել բացասական հետևանքների առաջացման հավանականությունը ինչպես ձեր, այնպես էլ այն անձի համար, որը կալանավորվում է ներգաղթի նկատառումներից ելնելով:
  - Ծանոթացեք. Տեղեկություններ ձեր իրավունքների մասին ձերբակալման ընթացքում
  - Պահպանեք հանգստություն: Մի՛ փախչեք, մի՛ դիմադրեք և մի՛ խոչընդոտեք: Դա կարող է բացասական հետևանքներ ունենալ ձեզ համար:
  - Եթե կարծում եք, որ ինչ-որ մեկին առևանգում են և նրան չեն ձերբակալում դաշնային գործակալները, **պետք է զանգահարեք տեղական ոստիկանություն**:

Արդյո՞ք ներգաղթի գծով գործակալներին անհրաժեշտ են հրամաններ որևէ մեկին ձերբակալելու համար:

- Ներգաղթի գծով գործակալներին անհրաժեշտ չէ **ունենալ դատավորի կողմից ստորագրված հրաման՝** ներգաղթի խախտումների հարցերով որևէ ֆիզիկական անձի ձերբակալելու համար: Այնուամենայնիվ, գոյություն ունի սահմանված ստանդարտ, որը նրանք պետք է բավարարեն առանց հրամանի մարդկանց ձերբակալելիս, և դատավորի կողմից կարող են Այնուամենայնիվ, գոյություն ունի սահմանված ստանդարտ, որը նրանք պետք է բավարարեն առանց հրամանի մարդկանց ձերբակալելիս, և դատավորի կողմից կարող են պատասխանատվության ենթարկվել ձերբակալման ժամանակ օրենքի խախտում կատարելու համար: Դուք, որպես դիտորդ, չեք կարող միջամտել, **նույնիսկ եթե կարծում եք**, որ դա ապօրինի ձերբակալություն է:
  - **Մի՛** փորձեք խանգարել դաշնային գործակալներին:

- Փոխարենը, **պահպանեք անվտանգ հեռավորություն և գրի առեք, թե ինչ է տեղի ունեցել**, որը կարող է օգնել կալանավորված անձին իր գործի շրջանակներում և գուցե կօգնի գործակալներին օրենքի համաձայն պատասխանատվության ենթարկելու:
- ՏԵՍԱՆՅՈՒԹ՝ **ICE-ի կողմից իրականացվող ձերբակալումները ճիշտ կերպով նկարահանելը կարևոր է**

➔ **մասնավոր սեփականության տարածքներ մուտք գործելու կամ ոչ հանրային տարածքներում պահվող փաստաթղթեր ձեռք բերելու համար:** Դուք, որպես դիտորդ, **չեք կարող միջամտել** ,նույնիսկ եթե կարծում եք, որ դա անօրինական ձերբակալություն կամ խուզարկություն է:

- Ներգաղթի գծով գործակալները կարող են մուտք գործել բիզնեսի ոչ հանրային տարածք՝ նույնիսկ առանց դատավորի կողմից ստորագրված հրամանի:
- Եթե դուք տարածքի սեփականատերն եք կամ հսկում եք այն, ապա կարող եք ասել, որ այն հանրային տարածք չէ, և որ դուք չեք տալիս ձեր համաձայնությունը այդտեղ մուտք գործելու համար:
- **Մի՛ փորձեք խանգարել կամ խոչընդոտել ներգաղթի գծով գործակալներին:** Դա կարող է վտանգի տակ դնել ձեր անվտանգությունը:
- Փոխարենը, **գրի առեք տեղի ունեցածը** անվտանգ հեռավորությունից:

Արդյո՞ք վարձկաններն աշխատում են դաշնային կառավարության հետ՝ ձերբակալություններ իրականացնելու նպատակով:

➔ DHS-ը հրապարակայնորեն հայտարարել **է,** որ դաշնային կառավարությունը պայմանագիր չի կնքում վարձկանների հետ՝ ներգաղթի գծով գործողությունների իրականացման նպատակով:

➔ ICE-ն աշխատում է մի շարք այլ դաշնային պետական մարմինների հետ՝ ներգաղթի գծով ձերբակալություններ իրականացնելու համար, այդ թվում՝ Սահմանապահ ծառայության (Border Patrol), Թմրամիջոցների դեմ պայքարի վարչության (Drug Enforcement Administration), Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI) և այլնի հետ: Երբեմն ICE-ը կարող է նաև գործակալներ բերել այլ երկրներից:

➔ Կալիֆորնիայում վարձկանները հայտնի են որպես գրավով ազատված անձանց գործով քրեական հետապնդում իրականացնող գործակալներ: Նրանք պարտավոր են լինել վերապատրաստված, լիցենզավորված և ապահովագրված: Նրանք վարձվում են երաշխավոր ընկերությունների կողմից, որպեսզի գտնեն և բերման ենթարկեն մեղադրյալներին, որոնք չեն ներկայացել քրեական դատարան

Ի՞նչ պետք է անեմ, եթե ներգաղթի գծով գործակալները կալանավորեն ինձ:

- **Մի՛ ստեք և կեղծ փաստաթղթեր մի՛ ներկայացրեք:**
- Դուք իրավունք ունեք ասելու, **որ ցանկանում եք լռել և խնդրել փաստաբանի** ծառայություն
  անմիջապես: Կարիք չկա որևէ բացատրություն տալ կամ ներողություն խնդրել:
- Դուք իրավունք ունեք խոսել փաստաբանի հետ որևէ բան ասելուց կամ որևէ բան ստորագրելուց առաջ:
  - Եթե ICE-ը կալանավորում է ձեզ, դուք իրավունք ունեք խորհրդակցելու փաստաբանի հետ, սակայն կառավարությունը պարտավոր չէ ձեր փոխարեն վճարել փաստաբանի ծառայությունների համար: Կարող եք խնդրել անվճար կամ մատչելի այլընտրանքային տարբերակներ:
- Եթե ICE-ը կալանավորել է ձեզ, դուք իրավունք ունեք կապվել ձեր հյուպատոսության հետ կամ տեղեկացնել ձեր կալանավորման մասին հյուպատոսությանը, որը կարող է ունենալ պաշտպանության գծով ծառայություններ՝

Ուրիշ ինչպե՞ս կարող եմ օգնել կալիֆորնիացիներին, որոնք տուժել են ներգաղթի գծով ձերբակալություններից:

- Դուք կարող եք աջակցել **տեղական կազմակերպություններին** , որոնք ներգաղթի գծով իրավաբանական ծառայություններ են մատուցում կալանավորված անձանց, ինչպես նաև այն կազմակերպություններին, որոնք աջակցում են կալանավորումներից և արտաքսումներից տուժած ընտանիքներին:
  - Այցելեք՝ *www.immigrationlawhelp.org/*

Եղե՛ք պատրաստ:

- Պատրաստեք ինքներդ ձեզ և ձեր ընտանիքին, եթե ձեզ ձերբակալեն: Անգիր հիշեք ձեր ընտանիքի և փաստաբանի հեռախոսահամարները: Եթե երեխաներ ունեք կամ դեղորայք եք ընդունում, ապա արտակարգ իրավիճակների համար կազմեք պլաններ:
- Ձեր ներգաղթի փաստաթղթերի պատճենը պահեք այն անձի մոտ, ում վստահում եք:
- Եթե ունեք ներգաղթի համար («A» համարը), հիշեք այն և տվեք այն ձեր ընտանիքին: Ներգաղթի պաշտոնյաները ոչ երկրի քաղաքացի ներգաղթյալներին տրամադրում են "A"կատեգորիայի համար: Այն կօգնի ընտանիքի անդամներին *տեղորոշել ձեզ:*
- Խորհրդակցեք ներգաղթի հարցերով փաստաբանի հետ և ունեցեք ստորագրված **G-28 ձևը**, եթե ունեք մտահոգություններ

Աշխատավայրում ներգաղթի գծով ձերբակալությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ այստեղ՝

- Կալիֆորնիայի՝ Աշխատանքային հարցերով հանձնակատարի և Կալիֆորնիայի Գլխավոր դատախազի համատեղ ուղեցույցը գործատուների համար
- Տեղեկատվություն փոքր բիզնեսի համար , Տե՛ս հունիսյան վեբինարը. Ներգաղթի գծով համապատասխանություն